



Եվրոպայի խորհրդի պայմանագրեր - Թիվ 44

**Մարդու իրավունքների և հիմնարար
ազատությունների պաշտպանության կոնվենցիայի
Թիվ 2 արձանագրություն, որով Մարդու
իրավունքների եվրոպական դատարանին շնորհվում
է խորհրդատվական եզրակացություններ տալու
իրավասություն**

Ոչ պաշտոնական թարգմանություն

Ստրասբուրգ, 6.V.1963թ.

Թիվ 2 արձանագրությունը (ԵԽՊ Թիվ 44) Կոնվենցիայի անբաժանելի մաս է կազմել 1970թ. սեպտեմբերի 21-ին ուժի մեջ մտնելուց հետո: Այդուամենայնիվ, սույն Արձանագրությամբ փոփոխված կամ լրացված դրույթները փոխարինվել են Թիվ 11 արձանագրությամբ (ԵԽՊ Թիվ 155) վերջինիս 1998թ. նոյեմբերի 1-ին ուժի մեջ մտնելուց հետո:

Նախաբան

Եվրոպայի խորհրդի անդամ հանդիսացող ներքոստորագրյալ կողմերը,

Նկատի առնելով 1950թ. նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) և, հատկապես, այլ մարմինների շարքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Դատարան) հիմնումը նախատեսող Հոդված 19-ը,

Հաշվի առնելով որոշ պայմանների բավարարման դեպքում Դատարանին խորհրդատվական եզրակացություններ տալու իրավասության անհրաժեշտությունը,

Համաձայնեցին հետևյալի շուրջ.

Հոդված 1

- 1 Նախարարների կոմիտեի հայցով Դատարանը կարող է խորհրդատվական եզրակացություններ տալ Կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների մեկնաբանմանը վերաբերող իրավական հարցերի առնչությամբ:
- 2 Նման եզրակացությունները չպետք է առնչվեն Կոնվենցիայի Բաժին 1-ում և Կոնվենցիային կից Արձանագրություններում սահմանված իրավունքների կամ ազատությունների բովանդակությանը կամ շրջանակին վերաբերող հարցերին կամ ցանկացած այլ հարցի, որը Հանձնաժողովը, Դատարանը կամ Նախարարների կոմիտեն կարող էին ուսումնասիրել Կոնվենցիայի համաձայն նախատեսված որևէ ընթացակարգի արդյունքում:
- 3 Դատարանի խորհրդատվական եզրակացությունը հայցելու Նախարարների կոմիտեի որոշումն ընդունվում է Կոմիտեի նիստերին մասնակցելու իրավունք ունեցող ներկայացուցիչների քվեների երկու երրորդ մեծամասնությամբ:

Հոդված 2

Դատարանը որոշում է, թե արդյոք խորհրդատվական եզրակացության համար Նախարարների կոմիտեի ներկայացրած հայցը սույն Արձանագրության Հոդված 1-ով սահմանված խորհրդատվական իրավասության շրջանակում է:

Հոդված 3

- 1 Դատարանը խորհրդատվական եզրակացություն տալու հայցը քննության է առնում լիազումար նիստում:
- 2 Դատարանի խորհրդատվական եզրակացությունները պետք է լինեն պատճառաբանված:
- 3 Եթե խորհրդատվական եզրակացությունն ամբողջությամբ կամ մասամբ չի արտահայտում դատավորների միաձայն կարծիքը, ապա ցանկացած դատավոր իրավունք ունի ներկայացնելու հատուկ կարծիք:
- 4 Դատարանի խորհրդատվական եզրակացությունն ուղարկվում է Նախարարների կոմիտե:

Հոդված 4

Կոնվենցիայի Հոդված 55-ով նախատեսված Ղատարանի իրավագործությունը պետք է ընդլայնվի՝ ներառելու սույն Արձանագրության նպատակների համար Ղատարանի կողմից անհրաժեշտ համարվող կանոնակարգի մշակումը և ընթացակարգի հաստատումը:

Հոդված 5

- 1 Սույն Արձանագրությունը բաց է Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար, որոնք կարող են կողմ դառնալ այն.

ա. ստորագրելով առանց վավերացմանը կամ ընդունմանը վերաբերող վերապահման,

բ. ստորագրելով վավերացմանը կամ ընդունմանը վերաբերող վերապահումով, հետագայում վավերացնելով կամ ընդունելով:

Վավերացման կամ ընդունման փաստաթղթերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

- 2 Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կոնվենցիայի բոլոր անդամ պետությունների՝ սույն հոդվածի պարբերություն 1-ի դրույթների համաձայն սույն Արձանագրության կողմ դառնալուց անմիջապես հետո:

- 3 Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո Հոդվածներ 1-ից 4-ը կհամարվեն Կոնվենցիայի անբաժանելի մաս:

- 4 Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ծանուցում է.

ա. առանց վավերացմանը կամ ընդունմանը վերաբերող վերապահման յուրաքանչյուր ստորագրման մասին,

բ. վավերացմանը կամ ընդունմանը վերաբերող վերապահումով յուրաքանչյուր ստորագրման մասին,

գ. վավերացման կամ ընդունման յուրաքանչյուր փաստաթղթի ի պահ հանձնման մասին,

դ. սույն հոդվածի պարբերություն 2-ի համաձայն սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու մասին:

Ի հաստատումն վերը նշվածի՝ ներքոստորագրյալները, համապատասխան իրավասություններով օժտված, ստորագրել են սույն Արձանագրությունը:

Կատարված է Ստրասբուրգում, 1963 թվականի մայիսի 6-ին, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ բնօրինակով, պահպանվում են Եվրոպայի խորհրդի արխիվներում: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետությանը: